ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կատարող՝ Մ.Գորգիսյանի անվան հ.158հ/դ ուսուցիչ
Գայանե Զաքարյան

Ղեկավար՝ Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ձ. Հ. Գյուլամիրյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1Մտածողության և խոսքի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում----------5

1.2 Ստեղծագործական մտածողության յուրահատկությունը և նրա զարգացման վերաբերյալ առկա տեսությունները----------7

1.3Գրաճանաչության փուլը և նրա առանձնահատկությունները----------9

1.4Գրաճանաչությունը որպես ստեղծագործական մտածողության զարգացման նախադրյալ----------11

ԳԼՈՒԽ2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

2.1Փորձարարության կազմակերպումն ու անցկացումը----------13

2.2Ծրագրի նկարագրությունն ու իրագործումը----------15

2.3Արդյունքների վերլուծությունը----------20

Եզրակացություն----------24

Օգտագործված գրականության ցանկ ---------- -25

Ներածություն

Ժամանակակից հասարակությունը առավել բարդ պահանջներ է ներկայացնում յուրաքանչյուր նոր սերնդի, որը մուտք է գործում հասուն կյանք: Այդ պատճառով էլ այսօր անընդհատ վերանայվում է կրթական համակարգը, իրականացվում է արժեքային դիրքորոշումների վերաիմաստավորում,ուսուցման բովանդակության և կազմակերպչական ձևերի նորացում:

Անձնավորության զարգացումը, նրա ստեղծագործ անհատականության բացահայտումը պետք է ընկած լինի մանկավարժական գործընթացների հիմքում:

Ստեղծագործական մտածողության ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեն ինչպես արտասահմանյան, այնպես էլ խորհրդային գիտնականները, ինչպիսիք են՝ Լ.Ս.Վիգոտսկին, Ս.Լ.Ռուբինշտեյնը, Ս.Վ.Բրուշլինսկին, Ա.Ն.Լեոնտևը, Դ.Ն.Ուզնաձեն և այլոք: Վ.Վ.Դավիդովի, Լ.Վ.Զանկովի, Յա.Ա.Պոնոմարևի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության մի շարք բնութագրիչներ անմիջապես կախված են ուսուցման գործընթացի կազմակերպվածությունից և բովանդակությունից:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ ստեղծագործական մտածողության զարգացման համար անհրաժեշտ է զարգացնող միջավայրի ապահովում, մասնավորապես տարրական առաջին օղակում, որը համընկնում է գրաճանաչության փուլի հետ:

Ուսումնասիրության **նպատակն** է ախտորոշել, բացահայտել և գնահատել գրաճանաչության փուլում երեխայի ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը և վերջինիս զարգացման արդյունավետ ուղիները:

Ուսումնասիրության **օբյեկտը՝** ստեղծագործական մտածողությունը կրտսեր դպրոցական տարիքում:

Առարկան՝ ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը գրաճանաչության փուլում:

Վարկած՝ ենթադրվում է, որ հատուկ մշակված ստեղծագործական առաջադրանքների ու ինտերակտիվ պայմանների ներդրումը ուսուցման գործընթացի մեջ նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը գրաճանաչության փուլում:

Վարկածին և նպատակին համապատասխան առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Դիտարկել և ընդհանրացնել ուսումնամեթոդական գրականության մեջ խնդրո առարկայի վերաբերյալ առկա մոտեցումները:
2. Վերլուծել ստեղծագործական մտածողություն հասկացությունը:
3. Որոշել ստեղծագործական մտածողության զարգացման աշխատանքի ձևերն ու բովանդակությունը գրաճանաչության փուլում:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գիտա-մեթոդական գրականության տեսական վերլուծություն, մանկավարժական փորձի ուսումնասիրություն, գիտական հետազոտություն, ախտորոշիչ մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1Մտածողության և խոսքի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում

Տարրական դպրոցում ուսման սկիզբը բարդ և պատասխանատու շրջան է երեխայի համար և սոցիալ-հոգեբանական, և' ֆիզիոլոգիական առումով: Փոխվում է երեխայի ամբողջ կյանքը, ամեն ինչ ենթարկվում է ուսմանը, դպրոցին, դպրոցական գործերին և պարտականություններին: Դա ոչ միայն կյանքի և գործունեության նոր պայման է, այլև՝ նոր կապեր, հարաբերություններ և պարտավորություններ: Հենց այդ պատճառով էլ կարևորվում է խոսքի, հաղորդակցության զարգացումը, որի շնորհիվ էլ իրագործվում են բարձրագույն հոգեկան գործընթացներն ու սոցիալական տեսանկյունից շփման առավել ընդունելի և անհրաժեշտ ձևերը:

Մտածողությունը որպես ճանաչողական գործունեության բարձրագույն աստիճան փոխկապակցված է պատկերային ընկալումների և պատկերացումների զարգացման հետ: Ինչպես Ս.Մանդինյանն էր նշում՝ դպրոցը պետք է աշակերտի հոգին զարգացնի, մտքին խորհելու կարողություն տա, զորեղացնի ու լայնացնի նրա ունեցած պատկերացումներն ու դրանց շրջանակը, նոր պատկերացումներ, հասկացություններ հայթայթի, նորանոր պատկերացումներ հորինելու ունակություն տա, իրերին ու երևույթներին մտքով տիրապետելու վարժվածություն ու կարողություն հաղորդի [1]:

Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքները իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյուն-ների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ:

---

[1]Մանդինյան Ս., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար. - Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1876.- 87 էջ:

Սկսած նախայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի, պատումի, նախադասության մասին, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու,հաղորդակցվելու,ինքնարտահայտվելու կարողություններ, զարգանում է նրանց տեսողական-պատկերային մտածողությունը:

Արդեն հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ: Սովորողը այսպես մշակում է իր խոսքը, յուրացնում գրավոր և բանավոր արտահայտվելու ճիշտ ձևերը, ձևավորում խոսքային վարքի մշակույթ՝ սովորելով ըստ անհրաժեշտության խոսել, լսել: Բացի որոշակի առաջադրանքը կատարելուց, սովորողը նյութից ակամա վերցնում է լեզվական կառույցներ, յուրացնում բառեր ու արտահայտություններ, որոնք հանդիսանում են բառապաշարի հարստացման միջոց, որն էլ նպաստում է բանավոր և գրավոր խոսքի ճիշտ ձևակերպմանը:

Կարդալու և գրելու ուսուցումը միջոց են խոսքի զարգացման ծրագրային խնդիրների իրականացման համար: Կապակցված խոսքի զարգացումը, որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց՝ առաջին դասարանից սկսած թե'բանավոր, թե' գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու արժեք է ստանում:

Ղ.Աղայանը այն կարծիքին էր, որ ,լեզուն մտքի արտահայտությունն է. մարդ որքան որ բան գիտե, այնքան բանի վերա էլ խոսելու կարողություն ունե[2]:

Խոսքի զարգացման գործում Ա.Բահաթրյանը շատ մեծ տեղ էր տեղ էր տալիս դասարանական ընթերցանությանը: Նա լեզվի ուսուցման հիմքում դնում էր լեզվի ու մտածողության անխզելի կապի ու դրանց համատեղ ուսուցման պահանջը: ,Լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերով հայտնած միտք, ուստի լեզուն ու միտքը, խոսելն ու մտածելը սերտ կապված են միմյանց հետ անընդմիջապես: Այդ պատճառով էլ դասատվության մեջ ամենևին չպետք է բաժանեն միմյանցից մտածելն ու խոսելը[3]:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոցով պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, հարստացնել գիտելիքները:

---

[2]ԱղայանՂ.,Երկերիժողովածու, 4-րդհր., ,Հայպետհրատե Երևան, 1963թ., 94էջ:

[3],Մանկավարժական թերթե, 1878, թիվ3, էջ26-27:

Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը, սակայն այդ ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտի դատողական մտածողությանը:

Կապակցված խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի հարուստ բառապաշարը: Իսկ բառապաշարի հարստացման համար պետք են մի շարք նախադրյալներ: Դրանք են ուսուցչի գրագետ խոսքը, գրքի տեքստերը, դրանց շուրջ բազմաշերտ աշխատանքը: Սակայն սրանք պասիվ գործոններ են և ինքնաբերաբար չեն զարգացնում սովորողի խոսքը: Հարկավոր է խոսքի բարձր ակտիվություն, այնպիսի պայմանների և միջավայրի ստեղծում, որտեղ երեխան ունենա խոսելու և գրելու պահանջ, այդ ամենը ձևավորվում է ձևաբանական գիտելիքների յուրացման շնորհիվ, որի հիմնական աղբյուրը ընթերցանությունն է:

,Կարդալ կնշանակե մտածել: Բացի աչքից ու բերանից, ընթերցանության ժամանակ հոգին նույնպես պիտի գործողություն գրգռվի: Մարդս ընթերցանելիս պիտի մտածե, նա ընթերցածը պիտի հասկանա և, եթե հասկանում է, նա այդ պիտի ապացուցե յուր ընթերցանության գեղեցկությամբե,-ասում էր Բահաթրյանը [4]:

1.2 Ստեղծագործական մտածողության յուրահատկությունը և նրա զարգացման վերաբերյալ առկա տեսությունները

Օբյեկտիվ իրականության ճանաչումը սկսվում է զգայարաններից և ընկալումից: Սակայն սկսվելով դրանցից այն դրանցով չի սահմանափակվում: Զգայարաններից և ընկալումից այն անցնում է մտածողությանը: Մտածողությունը արտացոլում է առարկաների և երևույթների միջև կապերն ու հարաբերությունները, նրանց էությունն ու առանձնահատկությունները, որոնք անմիջականորեն չեն տրվում զգայարաններին ընկալման համար:

17-րդ դարից սկսած մտածական գործընթացների ինտենսիվ ուսումնասիրությունը իրականացվում էր երկու հակադիր ուղղություններով. առաջինը ենթադրում էր, որ մտածողությունը բնածին հատկություն է, իսկ մյուսը՝ ելնում էր մտածական գործընթացների սոցիալական պայմանավորվածության գաղափարից:

---

[4]Բահաթրյան Ա. Ընթերցարանը և նորա նշան., գիրք 2-րդ, Երևան 1961, էջ71

Զ.Ֆրեյդը պնդում էր, որ ստեղծագործությունը համարվում է մարդու անգիտակցական ցանկությունների ու պահանջմունքների արտացոլումը՝ արտահայտված հասարակության կողմից ընդունելի ձևերով: Համաձայն հոգեվերլուծական տեսության անգիտակցականից եկող գաղափարների արտահայտությունը կրեատիվ գործընթացի բանալին է[5]: Ըստ այս տեսության, ստեղծագործությունը կախված է անգիտակցականի ակտիվությունից:Ա.Ադլերը ստեղծագործությունը համարվում է անլիարժեքության համալիրի փոխհատուցման արդյունք: Ռ.Ասաջոլին դիտարկում էր այն որպես անձի ինքնաբացահայտման միջոց, որպես ,իդեալական եսե-ի հետ նույնականացման գործընթաց: Կ.Գ.Յունգը առանձնացնում էր երկու տեսակ՝ հոգեբանական և զգայական, որն արտացոլում է անգիտակցականի արխետիպային կերպարները:

Խորհրդայի հոգեբաններից ստեղծագործական մտածողության գործընթացի ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Ս.Վիգոտսկին, Ա.Ն.Լեոնտևը, Վ.Պ.Զինչենկոն և այլք: Լ.Ս.Վիգոտսկին գրում էր. Մարդու ցանկացած այնպիսի գործունեություն, որի արդյունքը չի համարվում հին, նրա փորձում առկա տպավորությունների կամ գործողությունների վերարտադրությունը այլ նոր կերպարների կամ գործողություններ իստեղծումը հենց պատկանում է այդ երկրորդ՝ իր բնույթով ստեղծագործական կամ համակցված վարքին[6]:

Ստեղծագործական մտածողությունը դիտարկվում է որպես բնական գործընթաց, որն առաջանում է անորոշության կամ անավարտության հետևանքով ծագած լարվածությունը հաղթահարելու ուժեղ պահանջմունքով պայմանավորված:

Ռ.Արնխեյմը գրում է. ,,Մտածողության տարրերը ընկալման մեջ և ընկալումը մտածողության մեջ փոխլրացնում են միմյանց: Նրանք մարդկային ճանաչողությունը միավորում են միասնական գործընթացի մեջ, որը բերում է սենսորային տեղեկատվության տարրական ձեռքբերումներից ընդհանրացված տեսական գաղափարների[7]:

---

[5] Ильин Е. П./ Психология творчества, креативности, одаренности, Мастера психологии. // "Питер", 2013, 157 էջ

[6]Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте. — СПб.: СОЮЗ, 1997 էջ 4

[6]Выготский Л.С., էջ 58

7Арнхейм Р. Визуальное мышление // Хрестоматия по общей психологии: Психология мышления. — М., 1981, 78 էջ

1.3 Գրաճանաչության փուլը և նրա առանձնահատկությունները

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի):

Երեխայի խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ,հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:

Հայտնի է, որ գրաճանաչության փուլը համընկնում է կրտսեր դպրոցական տարիքի հետ,իսկ այս տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդ տարիքում թեև ուսումը դառնում է առաջատար,սակայն խաղը չի կորցնում իր հիմնական նշանակությունը: Երեխայի խոսքի զարգացման և գիտելիքների յուրացման կարևորագույն նախապայման է գրաճանաչության հմտությունների ձևավորումը:

Գալուստ Մալաթյանի կարծիքով գրաճանաչության ուսուցումը ,,մեքենայական գործմը չէ,,: Ինչպես նշում էր Ա.Ու.Վարդանյանը ,Զորացուցիչ, կրթիչ աշխատություն մը նկատուած է անե[10]:

Գրաճանաչության ուսուցումը գաղափարներ ավանդելու, զգացմունքներ մշակելու ու կամք ձևավորելու միջոց է, իսկ գրելը կրավորական երևույթ չէ, այլ երեխայի,մտքին գիտակցական մեկ զորացումը նշաններուն մեջե[10]:Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է:Հետևաբար գրաճանաչության փուլում մայրենի լեզվի և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

- ճիշտ արտահայտվելու կարողությունը
- բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը

Երեխայի խոսքը գրաճանաչության փուլում կարող է զարգանալ մի քանի փուլերով.

1. Կառուցվածքային, որը ենթադրում է լեզվական համակարգի տարբեր մակարդակների ձևավորում՝ հնչյունաբանական (հնչյունների ճիշտ արտաբերում), քերականական (քերականորեն խոսքի ճիշտ կառուցում);
2. Ֆունկցիոնալ՝ ենթադրում է հաղորդակցական խոսքի զարգացում, կապակցված խոսքի ձևավորում, այսինքն, մենախոսական և երկխոսական կարողությունների զարգացում;
3. Ճանաչողական կամ կոգնիտիվ, երբ լեզուն և խոսքը ծառայում են իմացությանն ու ճանաչողությանը, այսինքն՝ գիտելիքներ ձեռքբերելուն:

Լեզվի հիմնական միավորներն են՝ հնչյունները, վանկը, բառը, բառակապակցությունները, նախադասությունը, տեքստը:

Գրաճանաչության հիմնական խնդիրներն են.

1. ձևավորել գրելու և կարդալու տարրական հմտություն
2. զարգացնել ֆոնեմատիկ լսողություն

Գրաճանաչության ուսուցումը համարվում է մայրենի լեզվի ուսուցման կարևորագույն բաղկացուցիչ: Բացի խոսքային հմտությունները, այն առնչվում է գրականության ընթերցանությանը, այստեղից սկսում են ձևավորվել լեզվական հասկացությունները, պարզագույն քերականական և ուղղագրական ունակությունները, այսինքն՝ գրաճանաչության ուսուցման մեթոդիկան սերտ կապված է այլ բաժինների մեթոդիկաների հետ՝ քերականություն, ուղղագրություն, ուղղախոսություն և այլն:

Այսպիսով, գրաճանաչության փուլը համարվում է հենքային հմտությունների, մասնավորապես կարդալու, լսելու և գրելու կարևորագույն կարողությունների ձևավորման փուլ: Առանց այս հմտությունների երեխաները ոչ միայն չեն կարողանա ներառվել լուրջ ուսումնական գործունեության մեջ, այլև՝ յուրացնել գիտելիքներ և անհրաժեշտ կենսական կարողություններ:

---

[10]Վարդանյան Ա., ,Գրաճանաչության ուսուցման տեսական հիմունքներրը, Եր. ,Միտքե, 1970, 65 էջ

[10]Նույն տեղում

1.4 Գրաճանաչությունը որպես ստեղծագործական մտածողության զարգացման նախադրյալ

Ժամանակակից յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ հաճախ անհրաժեշտ է բազմաթիվ անգամներ կրկնել սովորողների հետ նույն նյութը, սակայն այն այդպես էլ չի յուրացվում աշակերտների կողմից: Երեխաները կարծես թե գիտեն կանոնները, ճիշտ են ձևակերպում դրանք, բառեր են կիրառում և նախադասություններ կազմում, սակայն գրավորի ժամանակ խախտում են այդ նույն կանոնները, իսկ ավելի ինքնուրույն աշխատանքների ժամանակ չեն կարողանում գրագետ և ճշտգրտորեն ձևակերպել սեփական մտքերը:

Ժամանակակից հոգեբաններն ու մանկավարժները, ովքեր ուսումնասիրում ենեերեխայի կողմից գիտելիքների յուրացման գործընթացները մեծ նշանակություն են տալիս երեխայի ուշադրության դաստիարակությանը:

Գրաճանաչության փուլում մայրենի լեզվի դասավանդման ժամանակ դաստիարակել ուշադրություն նշանակում է զարգացնել բառերի տարբեր ձևերը տեսնելու կարողությունը, այսպես կոչված, ,ուղղագրական զգոնությունը: Դա նշանակում է, որ նայելով գրված բառին երեխաները պետք է կարողանան ընկալել այն ամբողջությամբ և կառուցվածքային տարրերով հանդերձ: Լսելով խոսքը լսել ամբողջությամբ և նրա առանձին հնչյուններով (կոշտ և փափուկ, խուլ, հնչեղ, շեշտադրմամբ կամ առանց): Եթե ուսուցիչը չի դաստիարակելերեխայի ուշադրությունը բառի, նրա հնչյունային կողմի, նրա նշանակության և ձևի նկատմամբ, ապա սովորողը ,անհաղորդ կլինի խոսքին և նրա ուղղագրությանը:

Երեխաները գրաճանաչության փուլում դեռևս լիարժեք չեն գիտակցում կատարվելիք աշխատանքի ողջ պատասխանատվությունը: Նույնիսկ հետաքրքրությունը դեռ բավարար չէ, որ սովորողը առանց հիշեցնելու անցնի դրանց կատարմանը: Մայրենի լեզվի ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը այս փուլում դաստիարակվում է այն դեպքում, երբ երեխան ստանում է բովանդակալից, իր ուժերին համապատասխան, սակայն մտածելու տեղիք տվող առաջադրանքներ: Առաջադրանքները հետաքրքիր կլինեն և կնպաստեն ստեղծագործական մտածողության զարգացմանը միայն այն ժամանակ,երբ անհրաժեշտ է վերլուծել, համեմատել,բացատրել և ապացուցել, ինչպես նաև առաջարկել ուրույն, չկրկնվող լուծումներ:

Բառի նկատմամբ ուշադրությունը, մտապահման դիրքորոշումը, մտածական գործընթացների նկատմամբ ակտիվությունը, գիտակցական աշխատանքը

ուսուցման նկատմամբ,կամային լարվածություն, այս ամենը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման և գրաճանաչության հմտությունների ձևավորման մեջ:

Սովորաբար ուսուցիչը՝ սկսելով ծանոթացնել առաջին դասարանցիներին գրաճանաչության խնդիրներին, հոգում է այն մասին,որ որքան հնարավոր է երեխաները շուտ յուրացնեն կանոնները և շուտ անցնեն դրանց գործնական կիրառությանը, ինչն էլ հենց հանդիսանում է ստեղծագործական մտածողությա նզարգացման նախադրյալ:

Հնչյունաբանությունը, գրաճանաչությունը մշտապես մեթոդներ է թելադրել ուսուցչին և աշակերտին, հիմնավորել է հնչյունային վերլուծական-համադրական աշխատանքի ընթացքն ու կիրառված հնարները:

Ստեղծագործական մտածողությունը գրաճանաչության փուլում հարստանում է հմտությունների և կարողությունների ընդլայնման հաշվին: Երեխան աստիճանաբար սովորում է նոր ձևով գործ առնել սովորական առակաների,բառերի և բառակապակցությունների հետ,նոր կապեր և հարաբերություններ հաստատել:Բացի դրանից, ստեղծագործական մտածողությունը այս փուլում զարգանում էին ինտելեկտուալ և մտավոր ուժերի ակտիվացման շնորհիվ::

Ամբողջ առաջին դասարանում աշակերտները ստանում են ձևաբանական նախագիտելիքներ,անվանում են առարկա ցույց տվող բառերը,բառախմբեր են կազմում, սովորում են կենդանիների, մրգերի, թռչունների և այլ առարկաների անվանումները, համեմատում են դրանք իրար հետ,գտնում են նմանություններն ու տարբերությունները, բնութագրվում են այդառարկաները, նշվում՝ դրանց բնորոշ հատկանիշները:Լուծում են խաչբառներ,հանելուկներ յուրացնում՝առածներ,աստիճանաբար հաղորդակից դառնում ընթերցանությանը[15]:Օրինակ՝ Ինչքան կտրեմ, կերկարի, ինչքանտաշեմ՝կհաստանա:

Ամփոփելով վերոնշյալը, պետք է նշենք,որ ստեղծագործական մտածողությունը գրաճանաչության փուլում զարգանում է ինչպես որակական-բովանդակային, այնպես էլ պրոցեսուալ ուղղություններով և այդ զարգացումը նախևառաջ պայմանավորված է երեխայի համար նոր ուսումնական իրավիճակով ևդրա հետևանքով հոգեկանում առաջացած փոփոխություններով::

[15] Վ.Սարգսյան, ,Այբբենարանե, Դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար, Եր.2013 թ.,Մանմարհրատ., էջ118

ԳԼՈՒԽ2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

2.1 Փորձարարության կազմակերպումն ու անցկացումը

Փորձարարական աշխատանքը կազմակերպվել և իրականացվել է Մ.Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի 1բ դասարանի թվով 24 սաների հետ:

Աշխատանքի սկզբում կատարել ենք նախնական ախտորոշում՝ բացահայտել ենք ստեղծագործական երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը, որից հետո՝ իրագործել ենք ,Ստեղծագործական դասերե ծրագիրը, այնուհետև կրկին կատարել ախտորոշում բացահայտելու համար գրաճանաչության փուլում ստեղծագործական մտածողության զարգացման արդյունավետ ուղիները:

Այս նպատակով կիրառվել են ,Նկարիր ինչ-որ նկարե և Օ.Մ.Դյաչենկոյի ,Ավարտիր նկարըե մեթոդիկան[16]:

Առաջին մեթոդիկայի կիրառման ժամանակ երեխան պետք է 4 րոպեի ընթացքում արագ կողմնորոշվի և ինչ-որ անսովոր բան նկարի: Արդյունքների վերլուծությունը կատարվում է ըստ որոշակի չափանիշների.

10 միավոր, եթե երեխան տրված ժամանակի ընթացքում մտածել և նկարել է ինչ-որ անսովոր նկար, որն ակնհայտորեն վկայում է երևակայության զարգացվածության մասին: Նկարը արված է մանրամասն և հասկանալի է դիտողի համար:

8-9 միավոր երեխան մտածել և նկարել է բավականին անսովոր նկար, առկա է հուզական երանգավորում, սակայն նկարը այնքան էլ նոր չէ, նկարի տարրերը վատ չեն մշակված:

5-7 միավոր երեխան մտածել և նկարել է ոչ այնքան նոր բան, սակայն նկարի տարրերը պարունակում են երևակայական որոշակի տարրեր և դիտողին հաղորդում են որոշակի հուզական զգացողություն:

3-4 միավոր՝ երեխան հասարակ և սովորական նկար է արել, որևէ տարբերակիչ երևույթ առկա չէ, չի զգացվում երևակայության ուժը և այնքան էլ մշակված չեն նկարի տարրերը:

0-2 միավոր երեխան տրված աշխատանքի ընթացքում չկողմնորոշվեց չնկարեց որևէ նկար:

---

[16]https://psylist.net/praktikum/00148.htm (15.03.2020)

Ըստ այդմ, երևակայության զարգացման մակարդակը որոշվում է հետևյալ կերպ՝

Շատ բարձր-10 միավոր

Բարձր- 8-9 միավոր

Միջին- 5-7 միավոր

Ցածր- 3-4 միավոր

Շատ ցածր- 0-2 միավոր

Մյուս մեթոդիկան հնարավորություն է տալիս ախտորոշելու ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը: Այս թեստում առաջարկվում է ավարտել անավարտ պատկերները՝ ավելացնելով գծեր և դրանցով ստանալով առարկաներ, սյուժետային նկարներ:

Երեխային տրվում է թեստային քարտերից մեկը, որոնցից յուրաքանչյուրի վրա արված են անորոշ պատկերներ:

Նկար 2



Երեխային տրվում է հրահանգ՝ ,Հիմա դու պետք է ավարտես հեքիաթային այս պատկերները: Դրանք հեքիաթային են, որովհետև դու կարող ես լրացնել և ստանալ ցանկացած նկար, ինչպիսին կցանկանասե:

Նրանից հետո, երբ երեխան ավարտում է նկարը, կատարվում է քննարկում՝ ,ի՞նչ է ստացվել քեզ մոտե, պատասխանը ֆիքսվում է:

Առաջադրանքի գնահատման համար հաշվարկվում է օրգինալության գործակիցը, այսինքն՝ չկրկնվող պատկերների առկայությունը: Միանման են համարվում այն քարտերը, որոնք լրացվել և դարձել են նույն նկարը: Օրինակ՝ եռանկյունին և քառակուսին լրացվել և դարձել են հեռուստացույցի էկրան: Այդպիսի պատկերները միավոր չեն տալիս փորձարկվողին:

Այնուհետև, համեմատում ենք մյուս երեխաների նկարների հետ, եթե առկա է կրկնություն, ապա ոչ մեկին միավոր չի տրվում:

Փորձարկվողների տարբերակումը ըստ զարգացման մակարդակի իրականացվում է հետևյալ կերպ.

1. Բարձր (7-10 միավոր)-երեխաները տալիս են սխեմատիկ կամ մանրակրկիտ նկար, որը սակայն օրգինալ է, չի կրկնվում ո՛չ խմբի երեխաների մոտ, ո՛չ էլ սեփական նկարներում: Առաջարկվող պատկերը սովորաբար համարվում է նկարի կենտրոնական տարրը:
2. Միջին մակարդակ (3-6 միավոր)-երեխաները մեծ քանակով նկարներ են արել, որոնք սակայն սխեմատիկ բնույթ են կրում և կրկնվում, ինչպես խմբի, այնպես էլ սեփական նկարներում:
3. Ցածր մակարդակ (0-2 միավոր)- երեխաները փաստացի չեն ընկալել առաջադրանքը: Տրված պատկերի կողքին նկարել են նկար սեփական ցանկությամբ կամ արել են շաբլոն սխեմաներ, կամ նկարել են ոչ առարկայական պատկեր, օրինակ՝ ձևավոր գիծ:

Տվյալ փորձարարական աշխատանքում մենք շեշտը դրել ենք ոչ թե որոշակի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման վրա, այլև՝ երեխայի անձի և ստեղծագործական ընդունակությունների զարգացման վրա:

2.2 Ծրագրի նկարագրությունն ու իրագործումը

Մեր աշխատանքի ուշադրության կենտրոնում երեխաներն են գրաճանաչության փուլում: Ինչպես արդեն նշեցինք, այս շրջանը համարվում է բարենպաստ երևակայության և անձի ստեղծագործ էության զարգացման համար: Հենց այս շրջանն է համարվում երևակայության գործառույթի ակտիվացման տարիք, որը սկզբում դրսևորվում է վերարտադրմամբ, այնուհետև՝ ստեղծագործմամբ: Աշխատանքների ուղղվածության ընտրության հիմքում դրված է այս տարիքում ընդունակությունների զարգացման կառավարելիության գաղափարը:

Գաղտնիք չէ, որ երեխաները շատ շարժուն են, նրանց ուշադրությունն անկայուն է: Ի՞նչ մեթոդներով երեխաներին ստիպես, որ նրանք լսեն, ի՞նչ միջոցներով ուսումը դարձնես հրապուրիչ, զվարթ: Այս բոլորն իրականացնելուն օգնության են գալիս ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, որոնք սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը: Քանի որ

այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր[17]:

Առաջին դասարանում՝ գրաճանաչության փուլում ստեղծագործական առաջադրանքների իրագործումը ուսումնական պարապմունքների ընթացքում հնարավոր է դառնում տարիքային և անհատական առանձնահատկությունների շնորհիվ: Այդ պատճառով էլ մեր կողմից իրականացվել է Գ.Վ.Տերյոխովոյի ,Ստեղծագործական դասերե ֆակուլտատիվ կուրսը[18]: Մենք ծրագիրը հարմարեցրել ենք գրաճանաչության փուլին և ընտրել 70 առաջադրանքներ՝ նախատեսված 42 ուսումնական ժամի համար (Ավելի մանրամասն հավելված1-ում):

Այս ծրագրի նպատակն է.

- Մտածողության տրամաբանության, համակարգայնության զարգացումը
- Արդյունավետ, տարածական երևակայության զարգացումը
- Ստեղծագործական առաջադրանքների կատարման համար էվրիստիկական մեթոդների նպատակաուղղված կիրառման ուսուցումը

Պարապմունքների բովանդակությունը կազմակերպվել է այնպես, որ յուրաքանչյուր նոր ստեղծագործական առաջադրանքի ներառումը կողմնորոշված լինի ճանաչելու, ստեղծելու, վերակառուցելու և օբյեկտների, երևույթների, իրավիճակների կիրառմանը տարբեր բարդության խնդիրների լուծման ժամանակ: Ինչն էլ ապահովում է անհատական զարգացման մեջ փոփոխությունը՝ պահպանելով

ուսուցման համակարգի ամբողջականությունը:

Այս աշխատանքների ժամանակ առաջնային են համարվում հետաքրքրության զարգացումը գործունեության որոշակի տեսակների նկատմամբ, գեղագիտական ճաշակի ձևավորումը, համագործակցության ունակությունը, խմբում իրեն պահելու կարողությունը, հուզական կայունությունը, ինքնուրույնության խթանումը, և ամենակարևոր խնդիրներից է ձևավորել ուրիշների հաջողությամբ ուրախանալու և սեփական անձնային հաջողության հասնելու ձգտումը:

---

[17] Սարգսյան Վ.Ա. Այբբենարան: Ուսուցչի ձեռնարկ.-Եր., ,Մանմարե, 2011, 101 էջ

[18]https://docplayer.ru/42734009-Terehova-g-v-2006-uroki-tvorchestva-1-klass-rekomendacii-po-konstruirovaniyu-i-provedeniyu-zanyatiy-uroki-1-4.html (24.03.2020

Մեր ծրագրում պարապմունքները կառուցված են այնպես, որ տեղի ունենա գործունեության հաճախակի փոփոխություն, սակայն ողջ ծրագրի ընթացքում պահպանվում է պարզից բարդին անցման սկզբունքը, պարապմունքների ընթացքում իրականացվում են դինամիկ խաղային դադարներ:

Բացի վերոնշյալ առաջադրանքները ներառել ենք նաև հեքիաթաթերապիան և խաղային մեթոդիկաները, որոնք արդյունավետ են ոչ միայն ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացման, այլև՝ ուշադրության կենտրոնացվածության զարգացման համար:

Օրինակ՝ Կախարդական իրեր խաղ-վարժությունը սեղանի վրա դրված են տարբեր իրեր՝ հայելի, գրիչ, գիրք, լապտեր, մատիտ և այլն: Երեխան հորինում է հեքիաթ, միաժամանակ՝ հիմնավորելով, թե ինչու է տվյալ իրը կախարդական:

Այսպես՝ հայելին օգնում է տեսնել, թե ինչ է կատարվում աշխարհում

Գրիչը գրում է անսխալ, ինքնուրույն նշաններ է գծում

Գիրքն ունի բոլոր պատասխանները և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքի համար նախատեսված ծրագրի որոշակի առաջադրանքներ, հարմարեցրել ենք առաջին դասարանի ծրագրային պահանջներին՝ ներառելով վանկախաղ, խառնագիր, տրամաբանական լրացում պահանջող առաջադրանքներ:Օրինակ՝գրաճանաչության փուլում կիրառվող խաղերից է ,,Գտի'ր 10-ից ոչ պակաս բառեր, սովորողները նկարին նայելով պետք է թվարկեն թեմային առնչվող առնվազն 10 բառ, այնուհետև ընտրում են հատուկ ստուգող բառեր, որից հետո կազմում են նախադասություններ: Կարելի է խնդրել, նաև որ երեխաները նայելով նկարին՝ հորինեն ամբողջական պատմվածք:

Նկար 1

Բացի ,,Ստեղծագործական դասեր ծրագիրը, որը նախատեսված էր անցկացնել շաբաթական երկու անգամ, երկու ժամ տևողությամբ, մայրենի լեզվի դասավանդման, մասնավորապես՝ հնչյուն-տառերի ուսուցանման ժամանակ ևս աշխատել ենք կիրառել մտքի և բառապաշարի զարգացմանը նպաստող առաջադրանքներ և մեթոդական հնարներ:

Այսպիսով, դասերը պլանավորելիս և իրականացնելիս՝բացի կապակցված խոսքի զարգացման և հնչյուն-տառերի յուրացման նպատակներից, կարևորել ենք բառը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողության, մտքի ճկունության, արագ կողմնորոշվելու, ինչպես նաև՝ աշխատանքներ կատարելու կարողության զարգացումը:

Այսպես, առաջին Բ դասարանում ,Թթե հնչյուն-տառերիի ուսուցանման ժամանակ՝ խթանման փուլում երեխաները ,,Մտագրոհ ,,մեթոդական հնարի օգնությամբ ազատ արտահայտում էին իրենց մտքերը, ներկայացնում էին այն ամենը, ինչ գիտեն բաղաձայն հնչյունների վերաբերյալ:

Այնուհետև, ցույց տվեցինք, թ հնչյուն-տառերի հոլովակը (հատված ,երաժշտականայբուբենիցե): Հետո, երեխաներին ցուցադրեցինք, թ հնչյուն-տառով սկսվող բառերի նկարներ, երեխաները թվարկեցին և համալրեցին իրենց իմացած բառերով:

Իմաստավորման փուլում՝ երեխաների հետ միասին կարդացինք Սասունցի Դավթի վերաբերյալ հատվածը, միասին վերլուծեցինք այն, որից հետո՝դասարանը բաժանվեց խմբերի, տրվեց հանձնարարություն առաջին խումբը պետք է գրեր որքան հնարավոր է շատ բառեր, որտեղ թ-ն գտնվում է բառասկզբում, երկրորդ խումբը՝բառեր, որտեղ թ-ն բառամիջում ,և երրորդը՝բառավերջում գտնվող բառեր: Առաջադրանքը ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացրեց բառերի իր

խումբը, մյուս խմբերը լրացրեցին: Որից հետո, նրանք, Т-աձև աղյուսակի մեջ առանձնացրեցին թ- հնչյուն-տառով սկսվող միավանկ և բազմավանկ բառերը:

Այս առաջադրանքը կատարելուց հետո, երեխաները վերհիշեցին թե, որոնք են կոչվում միավանկ, որոնք՝բազմավանկ բառեր:

Մայրենի լեզվի կրթական նպատակներին համապատասխան մենք կիրառեցինք նաև ուսումնական խաղեր, որոնք ոչ միայն նպաստում էին հնչյուն-տառերի յուրացմանը, այլև՝ մտածական որոշակի ունակությունների, վանկատման կարողությունների զարգացմանը և բառապաշարի հարստացմանը: Դրանցից են՝ ,,Գտի'ր առարկան,, ,,Առարկայի մասին մի քանի բառ,, ,,Վանկերից բառեր ստանանք ,, ,,Գտի'ր սխալը, ,,Ամբողջացրու բառը և այլն[19]:

Արդեն, կշռադատման փուլում, կատարեցինք ամփոփում՝ կիրառելով ,Քառաբաժան,, մեթոդական հնարը:

Երեխաները կրկին բաժանվեցին խմբերի և լրացրեցին գրատախտակին գծված աղյուսակի չորս կողմը:

Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:
Ի՞նչ զգացի:	Ի՞նչ սովորեցի և իմացա:

Կիրառեցինք ,Խճանկար մեթոդը, որի էությունը կայանում է նրանում, որ երեխաները միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Վերջում բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը[20]:

---

[19] ԳյուլամիրյանՁ. ԽԱՂԱԼՈՎ ՍՈՎՈՐԵՆՔ:/-Եր.: ,Զանգակ-97ե, 2009.-41-45 էջ

20 Մ.Սարուխանյան, Մ.Միրումյան, Ն.Դիշաղաջյան: Փուլային ուսուցման եղանակ: Եր., 2014, էջ 111-112

Այնուհետև, իրականացվեց փոխադարձ գնահատում, որ խումբը լավագույնըներկայացավ, ովքեր ավելի արագ կողմնորոշվեցին և ավարտեցին առաջադրանքը, ով ավելի լավ կատարեց իրեն հատկացված դերը: Առաջադրանքը լավ կատարած խումբը խրախուսվեց:

Բոլորը ակտիվորեն մասնակցում էին, արտահայտում իրենց տեսակետը: Մեր կարծիքով, այս մեթոդը ոչ միայն նպաստեց սովորողների ընթեցանության կարողության զարգացմանը, նյութի հասկացմանը, այլև՝ փոխօգնության, համագործակցության, գնահատման և հիմնավորման կարողությունների զարգացմանը:

Այսպիսով, մեր նպատակն էր երեխայի ստեղծագործական պոտենցիալի բացահայտման, ստեղծագործական ընդունակությունների հաջող զարգացման, գեղագիտական դաստիարակության, հաղորդակցական հմտությունների և ստեղծագործությանը հաղորդակից դառնալու համար պայմանների ստեղծումը:

2.3 Արդյունքների վերլուծությունը

Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք բոլոր երեխաների նախնական ախտորոշում, որից հետո ուսումնական գործունեությունը հագեցրել ենք ստեղծագործական առաջադրանքներով: Այնուհետև, կրկին կատարել ախտորոշում բացահայտելու համար իրականացված աշխատանքների արդյունավետությունը, այս փուլում ստեղծագործական մտածողության զարգացման ուղղությամբ:

Ախտորոշումը կատարվել է 2-րդ և 3-րդ պարապմունքների ընթացքում, որպեսզի վերանա անհարմարավետության զգացման ազդեցությունը, որն այնքան բնորոշ է առաջին պարապմունքին:

Առաջին մեթոդիկայի արդյունքում մինչ ծրագրի ներդրումը, ստացվեցին հետևյալ արդյունքները.

Շատ բարձր ցուցանիշ գրանցեցին երկուսը

Բարձր՝ 5 երեխայի մոտ

Միջին՝ 9

Ցածր՝ 4-ի մոտ և շատ ցածր ցուցանիշներ գրանցեցին 4 երեխա:

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ մինչև ծրագրի իրականացումը երեխաների մոտ գերակշռում էր երևակայության զարգացման միջին մակարդակը, ինչպես նաև կային երեխաներ, ովքեր չկողմնորոշվեցին և

չկարողացան կատարել առաջադրանքը տրված ժամանակահատվածի ընթացքում:Բացի այդ մեծ թվով երեխաներ անվստահ էին, կարիք ունեին մեծահասակի ուղղորդման, անընդհատ հարցեր էին տալիս՝ ցանկանալով ստանալ աջակցություն կամ փորձում էին ընդօրինակել ընկերոջ աշխատանքը:

Կրկնակի ախտորոշումը ծրագրի ավարտից հետո հնարավորություն տվեց արձանագրելու, որ շատ բարձր ցուցանիշներ գրանցվեցին 5 երեխայի մոտ, բարձր՝ 8, միջին՝ 10, մեկ երեխա գրանցել էր երևակայության զարգացման ցածր արդյունք և լավագույն արդյունքն այն էր, որ ոչ մի երեխա չգրանցեց շատ ցածր մակարդակ: Արդյունքները ավելի ակնառու դարձնելու համար ներկայացրել ենք հիստոգրամի օգնությամբ:



Հիստոգրամ 1,Նկարի'ր նկարե մեթոդիկայի արդյունքների համեմատական վերլուծությունը ծրագրի իրականացումից առաջ և հետո

Հիստոգրամի արդյունքներից պարզ երևում է, որ այս տարիքում նպատակաուղղված, ջանադիր աշխատանքը ստեղծագործական երևակայության զարգացման ուղղությամբ, տվել է որոշակի արդյունք, թեև կրկին գերակշռող է երևակայության միջին մակարդակը, այնուամենայնիվ, երեխաները ստեղծագործական առաջադրանքների կատարման և պրոբլեմային իրավիճակների հաղթահարման շնորհիվ երկրորդ անգամ ախտորոշման ժամանակ ավելի արագ կողմնորոշվեցին և աշխատանքը կատարեցին ավելի բարձր մակարդակով:

Պետք է նշել, որ ծրագրի իրականացման սկզբնական փուլում, երեխաները առաջադրանքները կատարում էին ձևական, անվստահորեն, դժվարանում էին

հորինել նոր սյուժեներ, չէին կարողանում նկարագրել իրենց հերոսներին, ինքնուրույն մտածել լուծման սեփական տարբերակները: Հիմնականում խուսափում էին իրենց վրա կարևոր դերեր վերցնելուց, ստեղծագործական իմպրովիզացիաների ժամանակ պասիվ էին, պլաստիլինով աշխատանքների ժամանակ ձգտում էին ընդօրինակել մեկը մյուսին:

Սակայն աստիճանաբար, խաղային իրավիճակներում թոթափելով լարվածությունը, նրանց մեծ մասը արդեն չէր վախենում նախաձեռնող լինելուց, առաջարկում էր գաղափարներ և տեղափոխում դրանք նաև գործունեության այլ ոլորտներ, ինչպիսիք են նկարչությունը, կառուցակարգումը: Նայելով նկարին, գնալով ավելի հարուստ պատմություններ էին հորինում, սյուժեները դարձնում ավարտուն: Ավելի վառ ու արտահայտիչ հերոսներ ընդգրկում:

Ակտիվորեն ներառվում էին երկխոսության մեջ: Հեշտությամբ հիմնավորում էին սեփական հուզական վերաբերմունքը, ավելի շատ արտահայտչական միջոցներ էին կիրառում, ավելին, սեփական տրամադրությունը հաճախ սյուժեի օգնությամբ փոխանցում էին խմբին:

Ծրագիրը հնարավորություն տվեց էականորեն հարստացնել երեխաների բառապաշարը: Արդեն ծրագրի ընթացքում սովորեցին նկարագրել ավելի մեծ թվով կենդանի էակներ, առարկաներ, իրավիճակներ, տարբեր բնութագրիչներ, իրականացրեցին որոշակի գործողություններ: Ավելի հեշտությամբ էին առանձնացնում տարբերակիչ և նման գծերը: Կարևոր ձեռքբերումներից էր նաև այն, որ վստահորեն հիմնավորում էին սեփական կարծիքը:

Վերլուծելով ստեղծագործական մտածողության ախտորոշմանն ուղղված նկարները՝ տեսանք, որ երեխաներից 13-ի մոտ նկատվում էր միջին ցուցանիշ, այն կազմում է մեր ընտրանքի 54%-ը, բարձր էր միայն 3-ի մոտ (12.5%), ցածր էր 8-ի մոտ (33.5%): Նկարները, որոնք լրացրել էին երեխաները, հիմնականում կրում էին սխեմատիկ բնույթ, առանց շատ տարրերի, նկարների մեծ մասը կրկնվում էր:, Իսկ նկարների հաճախակի կրկնությունը ապահովում է օրգինալության միջին գործակից:

Իսկ դա նշանակում է, որ ստեղծագործական մտածողության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ուսուցման գործընթացում ընդգրկել մտքի լարում և ստեղծագործական մոտեցում պահանջող առաջադրանքներ:

Ռեթեստավորման ժամանակ ստացանք հետևյալ արդյունքները՝ 7-ը երեխա գրանցեցին բարձր արդյունք, համապատասխանաբար՝ 29%, 11-ը միջին

(46%), և 6 ցածր միավորներ (25%): Համեմատական վերլուծություն կատարելով՝ նկատում ենք, որ կատարված աշխատանքների շնորհիվ ունենք դրական որոշակի տեղաշարժ:

Արդյունքները	Հարցված Երեխաների քանակը՝ 24			
	Բացարձակ թիվը		%	
	I փուլ	II փուլ	I փուլ	II փուլ
Բարձր	3	7	12.5	29
Միջին	13	11	54	46
Ցածր	8	6	33.5	25

Աղյուսակ1 ,Ավարտիրնկարըե մեթոդիկայիարդյունքներիհամեմատականվերլուծությունը

Այսպես, փորձարարական հետազոտությունը փաստում է մեր կողմից իրականացված աշխատանքների արդյունավետության մասին: Աղյուսակից հստակ երևում է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակի դրական փոփոխությունը: Ավելին, ձևավորող փուլի ավարտից հետո ստեղծագործական ընդունակությունները բավականին բարելավվել են և արդեն երկրորդ փորձարկման ժամանակ ավելի քիչ դժվարություններ ունեցան:

Այսպիսով,ստեղծագործական առաջադրանքի յուրահատկությունը նրանում է, որ այն պահանջում է սովորողից ստեղծագործական գործունեության իրականացում: Հենց այս պատճառով էլ ստեղծագործական առաջադրանքների պարբերական կիրառումը գրաճանաչության փուլում նպաստում է ոչ միայն ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը և միշարք կարևոր որակների ձևավորմանը, այլև՝ճանաչողական հետաքրքրության և ակտիվության զարգացմանը:

Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ հատուկ մանկավարժական պայմանների, նպաստավոր, բարենպաստ մթնոլորտի ստեղծումը, ինչպես նաև՝ինտերակտիվ միջոցների և ուղեղի լարում պահանջող ստեղծագործական առաջադրանքների ներառումը, խմբի անդամների և մեծահասակի հետ համագործակցությունը ուսուցման գործընթացի ժամանակ զգալիորեն բարձրացնում է ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակը գրաճանաչության փուլում:

Եզրակացություն

,,Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը գրաճանաչության փուլում,, թեմայի տեսական և փորձարարական ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրահանգումներին.

1. Ստեղծագործական մտածողության վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսություններ, որոնք տալիս են տարբեր, երբեմն էլ հակասական մեկնաբանություններ: Չկա միանշանակ մոտեցում ինչպես հասկացության մեկնաբանության, այնպես էլ նրա զարգացման ուղղությունների վերաբերյալ: Միանշանակ է միայն այն, որ ստեղծագործական մտածողությունը կապված է նորարարության և չկրկնվող, տարբերվող լուծումների հետ: Սակայն ուսուցման գործընթացում գերակշռող կարծրատիպությունը, ինչպես նաև՝ պահպանողականությունն ու հարմարվողականությունը դեռևս լուրջ խոչընդոտ են նրա զարգացման համար:
2. Գրաճանաչության փուլը համընկնում է կրտսեր դպրոցական տարիքի հետ, որը երեխայի հոգեբանական զարգացման պատասխանատու շրջանն է: Հենց այս շրջանում են ինտենսիվորեն զարգանում բոլոր հոգեկան գործառույթները, ձևավորվում են գործունեության ավելի բարդ տեսակները, դրվում են ստեղծագործական ընդունակությունների զարգացման հիմքերը, ձևավորվում է պահանջմունքների և դրդապատճառների հիերարխիան, բարոյական նորմերը, ինքնագնահատականը, վարքի կամային կարգավորման տարրերը:

Գրականություն

1. ԱղայանՂ.,Երկերի ժողովածու, 4-րդհր., ,Հայպետհրատ Երևան, 1963թ., 648 էջ:
2. Բահաթրյան Ա., Ընթերցարանը և նորա նշանակությունը, գիրք 2, Երևան 1961
3. Գյուլամիրյան Ջ.Հ, Մայրենիի Տարրական Ուսուցման մեթոդիկա, Երևան-2015, 316 էջ
4. Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղալով սովորենք, Եր., ,Զանգակ հրատ., 2009, 80 էջ
5. ,Մանկավարժական թերթե, 1878, թիվ 3, 26-27 էջ
6. Մանդիկյան Ս. Ուսման նախագիծ ազգայի նուսումնարանների համար.,- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1876.- 87 էջ
7. Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, ,Հոգեբանե Հրատարակչություն, 1997թ., 648 էջ
8. Սարգսյան Վ., Այբբենարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար, Եր. Մանմար, 2013, 156 էջ
9. Սարգսյան Վ.Ա., Այբբենարան: Ուսուցչի ձեռնարկ,- Եր: ,Մանմար , 2011 236 էջ
10. ՍարուխանյանՍ.,ՄիրումյանՄ.,Ն. Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ,., 2014 158 էջ
11. Վարդանյան Ա., ,Գրաճանաչության ուսուցման տեսական հիմունքները Եր. ,Միտքե, 1970, 222 էջ
12. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր. ,Լույսեհրատ., 1980, 563 էջ
13. Ուշինսկի Կ.Դ.,Մանկավարժական ընտիր երկեր, Եր., ,Լույսե հրատ., 1981 թ., 443 էջ
14. Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում: Հիմնախնդիրներ և լուծումներ:Միջազգային կրթական երկրոր դգիտաժողովի զեկուցումների ու դրույթների ժողովածու/ ԵՊՀ միջազգային կրթական կենտրոն, -Եր., ԵՊՀհրատ., 2014, 232 էջ
15. Арнхейм Р. Визуальное мышление // Хрестоматия по общей психологии: Психология мышления. — М., 1981. — С. 98.
16. Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте. — СПб.: СОЮЗ, 1997. – 96 с.

17. Ильин Е. П./ Психология творчества, креативности, одаренности, Мастера психологии. // "Питер", 2013, 444с.
18. Рубинштейн С. Л. Основы общей психологии. - СПб.: Питер, 2007. - 713
19. https://psylist.net/praktikum/00148.htm
20. https://docplayer.ru/42734009-Terehova-g-v-2006-uroki-tvorchestva-1-klass-rekomendacii-po-konstruirovaniyu-i-provedeniyu-zanyatiy-uroki-1-4.html

Հավելված 1


ԽՈՍՔ
ՈՒՇադրություն
Ստաձողություն
Հիշողություն
Տրամաբանություն
Երևակայություն
Ընկալում

Հավելված 2

Առաջադրանք 1 Գտի՛ր ավելորդը

- Ուշադի՛ր նայիր նկարներին և ասա, թե ի՞նչ ես տեսնում
- Ի՞նչ ենք անում այս առարկաներով
- Ո՞րը նման չէ մյուսներին և ինչու՞

- Օրինակ, մկրատը ավելորդ է, քանի որ նրանով կտրտում են, իսկ մյուսները խաղալիքներ են,

Քարտերով աշխատանքի դեպքում երեխային տրվում է համապատասղան տառի քարտը կամ այդ տառով սկսվող բառերի նկարներ, երեխան պետք է գտնի այն, կողքի վանդակում գրի մեծատառը կամ փոքրատառը: Կազմի համապատասխան տառով, հնարավորինս շատ բառեր:

Հավելված 3

Դասի պլան

Տևողությունը՝ 45 րոպե

Դասարան՝ Առաջին

Դասի թեման՝ «Թ» հնչյուն-տառի ուսուցում

Դասի նպատակները՝

- կապակցված խոսքի զարգացում,
- հնչյուն-տառի ուսուցանում,
- թ տառի գրության կարողության ձևավորում,
- համատեղ աշխատելու և համագործակցության կարողությունների զարգացում

Դասի խնդիրները՝

- կարդալու սկզբնական կարողությունների զարգացում
- ստեղծագործական մտածողության զարգացում
- Թ հնչյուն-տառի ընկալման, բառի մեջ տեղի որոշման կարողությունների ձևավորում
- Բառը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողության ամրակայում
- Տրված տառով բառեր կազմելու կարողության ամրակայում

Դասի տիպը՝ հաղորդման դաս

Անհրաժեշտ պարագաներ՝ համակարգիչ, պրոյեկտոր, գրպանիկներով խորանարդ:

Խթանման փուլ՝ Էկրանին հայտնվում է թ տառի հոլովակը: (Հատված «երաժշտական» այբուբենից):

Տեսասահիկ 1 երեխաները թվարկում են թ հնչյուն-տառով սկսվող նկարների անունները, ավելացնում այլ բառեր

Իմաստավորման փուլ՝

Տեսասահիկ 2 Հյուսել պատմություն դասագրքի նկար-պատմության շուրջ

Տեսասահիկ 3 Կարդալ համապատասխան բառերը, իրականացնել վանկախաղ